№ 94 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18 1894 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18 № 94

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկաթուղի դէպի Երևանեան նահանգը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վէրքերը մի ծածկէք. Մուրացիկ ուսուցիչներ. Սովեալների օգին. Նամակ Կարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինա-եապոնական պատերազմը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համալսարանական երկուհարիւրամեակ.

ԵՐԿԱԹՈՒՂԻ ԴԷՊԻ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳԸ

—

Դէպի Երևանեան նահանգը երկաթուղու գիծ անցկացնելու խնդիրը մշակվում է այժմ ամենալուրջ կերպով։ Ինժեներները և հողաչափները քննում են այն գծերը, որոնք կարող են յարմար դատվել երկաթուղու համար։ Մասնագէտները տնտեսական տեսակէտից հետազօտում են այն տեղերի շրջակայքը, որոնցով պէտք է անցնի երկաթուղին, պարզելու համար, թէ որչափ արդիւնաւէտ կարող է լինել ապագայ երկաթուղու այս կամ այն ուղղութիւնը ապրանքների քանակութեան կողմից, կամ որչափ նա կարող է նպաստել երկրի բնական հարստութիւնների ապագայ մշակութեան։

Խնդիրը մտնում է իր լուծման և ըստ երևոյթին նա աջող ընթացք կը ստանայ գործնականապէս։

Երկաթուղու գծի համար ամենամեծ դժուարութիւն է ներկայացնում այն լեռնաշղթան, որով Երևանեան նահանգը բաժանվում է Թիֆլիսի նահանգից։ Այդ շղթան, արդարև, զանազան տեղերում անցքեր ունի, բայց երկաթուղու համար, որի գիծը պահանջում է ուղղաձիգ ընթացք, նրանք անյարմար են և միջանցքներ փորելու աշխատանք և ծախս են պահանջվում։ Ըստ երևոյթին, նախապատուութիւն կը տրվի այն գծին, որ միացնում է Ջալալ-Օղլին Փամբակի հետ, որտեղից նա կանցնի Ալէքսանդրոպոլ և ապա երկու ճիւղաւորութիւններով կերթայ դէպի Կարս և Երևան։

Դէպի Երևանեան նահանգը երկաթուղի կառուցանելու կարևորութիւնը զգացվում է վաղուց թէ ռազմագիտական և թէ տնտեսական տեսակէտից։

Սահմանագծերի հետ արագ հաղորդակցութեանը մեծ նշանակութիւն են տալիս ռազմագէտները. այդ միջոցով ամենամեծ դիւրութիւններ են ձեռք բերվում պատերազմների ժամանակ՝ թէ զօրք, թէ պատերազմական մթերքներ և թէ ուտեստի պաշարներ տեղափոխելու համար։

Ինչ որ վերաբերում է երկաթուղու տնտեսական նշանակութեան, նա շատ մեծ է, և ցաւել միայն կարելի է, որ մի այդպիսի մեծ գործ մինչև այժմ յետաձգվել է և չէ իրագործվել։

Երևանեան նահանգը, բացի այն արդիւնքներից, որ կարող է ինքը տալ, կը գրաւի ապրանքներ հարևան երկիրներից և կը նպաստի նոր արդիւնաբերութիւնների զարգացման։ Երևանեան նահանգի ժողովուրդը բաղկացած է կուլտուրական և աշխատասէր տարրերից, որոնք կարօտ են նպաստող հանգամանքների՝ աւելի արդիւնաւէտ դարձնելու իրանց գործունէութիւնը։ Երևանեան նահանգում դեռ անմշակ են մնում այնպիսի անապատներ, ինչպէս են Արագածի ստորոտում և Ախուրեանի ափերում ձգված դաշտավայրերը, Նախիջևանի տափարակները, որոնց բարգաւաճման, մեռելութիւնից կենդանութեան վերածելու խնդիրը ինքն ըստ ինքեան առաջ կը գայ, երբ իրագործված կը լինի մի այնպիսի մեծ և արագ հաղորդակցութեան ճանապարհ, ինչպիսին է երկաթուղին։

Այն օրից, երբ երկաթուղին կը կապի Երևանեան նահանգի խոր և հեռաւոր տեղերը Սև և Կասպից ծովերի հետ, երբ այն արդիւնքները, որոնք մինչև այժմ մնում էին երկրի մէջ և փթում,—կարտահանվեն մեծ վաճառականոցները, այն օրից, ասում ենք, կաճեն և կը զարգանան տեղական երկրագործութիւնը ու արհեստները։

Սեծ հաղորդակցութեան ամենաբարերար ազդեցութիւններից մէկն էլ կը լինի մարդկանց շփումը միմեանց հետ, մաքի փոխանակութիւնը, եւրոպական հոսանքների մուտքը մեր երկրում։

Ի հարկէ, ամեն մի մեծ արդիւնագործութիւն բերում է իր հետ և կապիտալիզմի անյարմարութիւնները, բայց սրանց դէմ մաքառումը և կռիւը պէտք է կատարվի իր կարգով, առանց հերքելու այն մեծ առաւելութիւնները, որ տալիս է երկաթուղու նման մի կարևոր կուլտուրական ձեռնարկութիւն։

Երկաթուղու գիծը մեծ զարկ կը տայ Երևանեան նահանգի արդիւնաբերութեան զարգացմանը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԷՐՔԵՐԸ ՄԻ ԾԱԾԿԷՔ

—

Իրանց ստորութիւնները ծածկելու համար խաւարամիտները միշտ նոյն երգն են երգում. «Ժողովրդին այս չէ կարելի ասել, այն չէ կարելի ասել»։ Նրանք միշտ երևակայում են, որ ժողովրդի առողջ խելքը, առանց իրանց մենաւորութեան, ինքն իրան չի հասնի ճշմարտութեան, նրանք իբրև թէ համոզված են, որ տխուր իրականութեան անթիւ, անհամար փաստերի առաջ իրանց փարիսեցիական վարագոյրները որ և է նշանակութիւն ունեն. ծածկելով, մոլորեցնելով, ստելով, նրանք կարծում են, որ կը բուժեն վէրքը կամ խարխուլ շինութիւնը կազատեն փլվելուց։

Դեռ հայոց մամուլ չը կար, որ հայ ժողովուրդը իր սրամիտ առածների մէջ արտայայտում էր իր քննադատական հայեացքը մեր հոգեւորականութեան մասին, ծաղրելով նրա սարսափելի տգիտութիւնը և բարոյական ոչնչութիւնը։ Իսկ մեր խաւարամիտները ըղաւում, ճղաւում են, թէ չը պէտք է մերկացնել հոգեւորականութեան պակասութիւնները, որպէս զի նրա հեղինակութիւնը վայր չընկնի հասարակ ժողովրդի աչքում։ Այդ եղուիտները կարծում են, որ ժողովրդի առողջ դատողութեան դէմ որ և է նշանակութիւն կարող են ունենալ նրանց քօղարկված սօփեստութիւնները։ Նրանք իրանք իրանց մատնում են, երբ հարցը դալիս է այն հոգեւորականներին, որոնց սիրում է ժողովուրդը, բայց որոնց ատում են իրանք. այն ժամանակ էլ սուտ, էլ փողոցային հայհոյանք, էլ ցեխ չէ մնում, որ չը շպրտեն այդպիսիների վրա...

Առաջադէմ մամուլը իր գոյութեան առաջին օրվանից արդէն դրել է իր մատը մեր եկեղեցու այդ ամենամեծ վէրքի՝ հոգեւորականութեան մատաւոր և բարոյական սնանկութեան վրա։ Ի՞նչ ծածկելու բան կայ, երբ դանակը ոսկորին է հասել և այդ դրութիւնը nec plus ultra ցաւալի է։ Բուժելու փոխարէն քօղարկելով՝ միայն միջոց է տրվում ժողովրդին աւելի ևս սառչելու իր եկեղեցուց, աւելի ևս կտրելու իր կապը հոգեւորականութեան հետ։ Զգոյշ պէտք է լինել. մինչ խաւարամիտները իրանց օրօրները երգելով կաչխատեն քնեցնել ժողովրդի զարթնած ինքնաճանաչութիւնը, մի օր իրանք էլ կը քնեն և զարթնելով կը տեսնեն, որ վիրը անանցանելի է...

Բթամիտ չովինիստ պէտք է լինել, չը խոստովանելու համար, որ հաղիւ կը գտնվի մի քրիստոնեայ ազգ, որի հոգեւորական դասը աւելի ըստոր մտաւոր բարոյական վիճակի մէջ գտնվէր, քան մեզ մոտ։ Կեանքը անթիւ փաստերով է խոսում։ Ուշադրութեամբ քննեցէք այդ ախուր երեւոյթների պատճառները և օրօրներով ու երգներով մի մխիթարվէք։

Որ քաղաքը, որ գիւղը ուղում էք վերցրէք և կը տեսնէք, որ կռիւների, ինտրիգների, զրպարտութիւնների, և բամբասանքների ու դայթակղեցուցիչ վարմունքների հերոսների մէջ մեծ մասամբ ամենանշանաւոր դերակատարները, աւաղ, հոգեւորականներն են։ Մի տեղ նրա անսահման տգիտութիւնն է պատճառ խառնակութիւնների, երկրորդ տեղ նրա անբարոյականութիւնը, երրորդ տեղ նրա արծաթասիրութիւնը, չորրորդ տեղ նրա փաչայականութիւնը և այն և այն։

Տէրտէրը կմկմալով է կարդում. աւետարանի ոչ մի գաղափարը չէ հասկանում. կրօնի մէջ բացի ծէսից ոչ մի բան չէ ընդունում և նա կրօնասոյց է ու իր հեղինակութիւնը պահպանելու համար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

—

Պրուսիայի իշխանութեան մէջ, Ջալ գետի ափին գտնվող Հալլէ քաղաքը, օգոստոսի 1-ից ըսկսած, չորս օր շարունակ կատարեց իր համալսարանի գոյութեան երկու հարիւրամեայ յօբելեանը։ Այս առիթով ոչ միայն գերմանական բոլոր համալսարաններն ու քաղաքները, այլ և օտար պետութիւնների մի քանի համալսարանները ևս իրանց կողմից ուղարկել էին պաշտօնական ներկայացուցիչներ։ Երկրի հեռաւոր ծայրերից ու զանազան տեղերից հաւաքված էին բազմաթիւ հանդիսականներ։

Յօբելեանի ուշադրութեան արժանի կողմը ոչ միայն չքեղ հանդիսատարութիւնն է, այլ այն, որ մարդ պարզ կերպով տեսնում է ամբողջ գերմանական ազգի ոգին, նրա գիտութեան այժը ու կիրթ ճաշակը. այստեղ երևան է գալիս գերմանացի ուսանողութեան պայծառ պատկերը, համալսարանի հետ ունեցած նրա կապերը թէ ուսանող ժամանակ և թէ համալսարանը թողնելուց յետոյ. վերջապէս մարդ տեսնում է մի պարտաճանաչ ժողովուրդ, որ գիտէ ինքն իրան օրինակելի կերպով կառավարել և այնպիսի հաստատուն հողի վրա է կանգնած, որ հետզհետէ իր մէջ եղած պակասութիւնները ոչնչացնելով՝ միշտ և միշտ կատարելութեան պէտք է դիմի։

Ահա թէ ինչ դրդիչ պատճառներ են եղել մի ամիսվա գաղափար տալու այս հանդիսի մասին։ Անցնենք բուն գործին՝ նկարագրութեանը։

Հանդիսակատարութիւնը կարելի է բաժանել երկու մասի՝ այն է պաշտօնական և հասարակական. շատ հասկանալի է, որ առաջին բաժնում միմիայն պաշտօնական մարդիկ կարող էին ներկայ լինել. ուրիշ կերպ անկարելի էր, որովհետև համալսարանի դահլիճում կամ մի որ և է եկեղեցում անհնարին էր տասնեակ հազարաւոր մարդկանց տեղ տալ։ Հէնց այս պարզ պատճառով մենք աւելի հասարակական բնաւորութիւն կրող բաժինը տեսած լինելով, առաւելապէս նրա վրա ուշք կը դարձնենք։

Զը նայած յօբելեանի չորս օրվայ տեւողութեանը, այնու ամենայնիւ էական մասը կատարվելու էր օգոստոսի 2 և 3-ին։ Իւրաքանչիւր եկող հէնց կայարանից սկսած տեսնում էր զգալի փոփոխութիւն. կայարանի առջև՝ երկաթ կողմից պատերը զարդարված էին կանաչ խոտերից ու ծառերի թարմ ճիւղերից հիւսված կոր գծերով. յատկապէս փողոցներում տնկված էին նոր նոր բարակ սիներ 4—5 սաժէն բարձրութեամբ, որոնք կանաչ խոտի օձապտոյտ հիւսուածքներով փաթաթված՝ իրանց գլխին կրում էին գերմանական դրօշակը կարմիր, սպիտակ ու սև գոյներով. քիչ հեռուն ձեր առաջ բացվում է ծաղիկներով ու ծառերի ճիւղերով և հաստատուն սիների վրա նստած մի հսկայական կամար, հետեւալ վերտառութեամբ, «Vivat Academia»։ Շարունակում էք ձեր քայլերը առաջ, տեսնում էք փողոցների երկարութեամբ նոյն դրօշակազարդ սիները. գոյնզգոյն դրօշակներ լուսամուտների ու կտուրների վրա. դարձեալ կանաչով զարդարված շինութիւնների ու լուսամուտների անվերջ շարքեր. մի երկու փողոցից յետոյ անչուշտ կը պատահէք անպաճոյճ, բայց թարմ կանաչներից պատրաստած, առաջինի համեմատութեամբ, փոքրիկ կամարների. թագաժառանգի գալու պատճառով սրանցից երկու երեքի վրա կարդացվում է «Willkommen» (բարով եկաք). ահա ձեր առաջ բացվում է մի հրապարակի վրա վիթխարի շինութիւնը, որը թաղված ոտից մինչև գլուխ դրօշակների, կանաչի ու ծաղիկների մէջ՝ իր ապակիների վրա գրված խոշոր տառերով ցանկանում է.

Vivat academia. Vivat professores.

Անցնենք աւելի առաջ. շատ խանութների լուսամուտներում դրված են Վիլհելմ III կայսրի բիւստերը, երբեմն միայնակ, երբեմն պապի ու հօր բիւստերի հետ միասին՝ դարձեալ ծաղիկներով ու կանաչներով զարդարված։ Զափազանցութիւն չի լինի ասել, որ քաղաքը համարեա ամբողջովին կանաչով ու գոյնզգոյն դրօշակներով պճնված՝ ներկայացնում է վերին աստիճանի հրաշալի նախշուն տեսարան։ Օգոստոսի 2-ն է, առաւօտեան ժամը 9, երբ համալսարանի դահլիճում, պաշտօնական ներկայացուցիչների մասնակցութեամբ, կատարվելու է ճառախօսական հանդիսատարութիւն։

Մտնենք օրվայ հերոսին՝ համալսարանին. սրա գլխաւոր մուտքը ծածկված է ոսկեգոյն թելերով եղրներն ասեղնագործած ու ոսկեփայլ ծոփերով զարդարած կարմիր թաւշեայ հովանիով. մուտքի աջ ու ձախ կողմից բնական մեծութեամբ քարեայ առիւծները, իրանց զօրեղ թաթերն առաջ տարածած, կարծէք, ահռելի տեսքով և՛ մուտքն են պահպանում, և՛ գիտութեան այժի սիմվոլ ներկայացնում։ Փակադծի մէջ ասած, առիւծների ու արծիւների հսկայական արձանները գերմանական հասարակական շինութիւնների ամենատարածված ու սովորական զարդարանքներն են կազմում։

Նոյն գլխաւոր մուտքի երկու անկիւններից, մօտ տասնական սաժէն հեռաւորութեամբ, ժամանակաւոր շինված փայտեայ աշտարակները, սաժէնաչափ լայնութեան նոյնպիսի կարմիր թաւշով, միացրած են համալսարանի կտուրի անկիւնների հետ, որոնք երկու կողմից կազմում են չորս հինգ սաժէն բարձրութեամբ մի փառաւոր ծածկոց։ Համալսարանի ձեղուններն ու կտուրի բարձրադիր մասը նոյնպէս շրջապատված են կարմիր կտորով։ Սրանց հետ միացնելով հիւսված կանաչները, ծառերի ճիւղերն ու դրօշակները, համալսարանի ամբողջ շինութիւնը նմանվում էր զուգված ու զարդարված հարսի։ Լուսաւորութեան տաճարի չորս կողմը, մօտակայ փողոցները ու շինութիւնների լուսամուտները լի են հանդիսատեսներով։ «Դօմ» եկեղեցում նշանակված ժամերգութիւնը կատարելուց յետոյ՝ ժամը 10-ից քիչ անց պաշտօնական անձինք սկսեցին կամաց կամաց հաւաքվել համալսարան։ Գընալով աւելի ու աւելի բազմութիւնը խռնվում էր. չը նայած դրան՝ կարգապահութիւնը վերին աստիճանի օրինակելի էր. մի երկու ոստիկանների գոյութիւնն աննշմարելի և նոյն իսկ աւելորդ էր, որովհետև իւրաքանչիւր մարդ գիտէր ինքն իրան

ուսուցիչներին «հակակրոն» է անուանում, որովհետև նրանք ասում են, թէ երկիրը կլոր է, երկիրը պտտում է, որովհետև նրանք կրօնի դասաւանութիւնից պահանջում են բարոյականացնող, աղնուացնող դաղափարների տարածում։

Տէրտէրը, վարդապետը եկեղեցում իրար հայհոյում են, ժամասացութիւնը ծաղրի նիւթ են շինում, քարոզներում ամենաանհեթեթ բաներ ասում, ոչ մի բարոյական մնունդ չեն կարողանում տալ ծխականներին՝ այդ ոչինչ։ Բայց ահա մի աղքատ աշակերտ, որ կրկնակօշիկ չունի, ուստի ցեխոտ կօշիկներով է մտնում եկեղեցի, կամ երդեցողութեան ուսուցիչ, որ քառաձայն ներդաշնակ խումբ է կազմում,—հալածվում են, եկեղեցի պղծողներ, եկեղեցու թշնամի են անուանվում։

Ընտրութիւնների ժամանակ քահանան կարգ և կանոն պահպանելու փոխարէն զեղծումներ է անում, բռնութիւն է գործ դնում, վիրաւորում է, հայհոյում է ծխականներին, որոնք հրաւիրում են նրան կարգի, և ինչ. վարձկան և գարշելի թերթերի պաշտպանութեան և խնկարկութեան նիւթն է այդ տէրտէրը։

Քահանան բռնվել է մի չարք սուտ արարքների մէջ, պախարակվել է այս ինչ անձից. և ահա ով է տնից տուն, խանութից խանութ ընկած, այս նոր եկւորի դուռը ծեծում, այս ինչ խայտառակ թերթին դիմում՝ բամբասելու, զրպարտելու, անուանարկելու համար, անկիւնի ետևից չարախօսելու իր պախարակողին—էլի քահանան։ Ո՞վ է զինում սրա կամ նրա դէմ պառաւների և ծերերի նախապաշարմունքը, ով է պասկվիլներ տպում, ով է Ցօրկվէմաղօի դեր կատարում, եթէ ոչ նոյնը։ Մոմավաճառութեան, վանքապատկան կալուածների, ուխտատեղիների արդիւնքների մէջ զեղծումներ են կատարվում, կեղծ կնիքներ են շինվում, գումարներ են թաղցնվում, հազարաւոր ծառեր են կտրվում ու ծախվում, անտառներ են փչանում, հազարաւոր դեսեատիններով կալուածներ են տանուլ տրվում և այս ու այն մարդկանց սեփականութիւն դառնում և այլն և այլն. ովքեր են պատճառները։

Սիմոնականութիւնը, կաշառակերութիւնը մի մշտատև ախտ է դառել։ Շատ տեղ քահանաները վաշխառութեամբ են պարապում, իրանց անտանելի վարքով սարսափելի տեսարանների վկայ են դարձնում ժողովրդին. առաջնորդի ծառան քահանայ է ձեռնադրվում. հաս ու չըհասը անթիւ զեղծումների և կաշառակերութիւնների աղբիւր է դառել և դեռ լռենք, ծածկենք, չը մատնենք առաջն առնելու։

Հոգևորականները սէր, համբերութիւն, եղբայրսիրութիւն քարոզելու տեղ՝ նախանձ, ատելութիւն, հալածանք, կամայականութիւն և բռնութիւն են քարոզում. զիտութեան լոյսը ուղեցոյց ունենալու տեղ՝ միջնադարեան խարոյկով են սպառնում. ուսումնարաններում բարձր բարոյականութեան փոխարէն նախապաշարմունքներ են սերմանում և պէտք է լռենք, պէտք է ձևացնենք թէ չենք նկատում։ Ոչ և երբէք ոչ։

L.

ՄՈՒՐԱՑԻԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

—

Տարիներ շարունակ մեր մամուլի մէջ անդադար գրվել է ուսուցչական խմբերի կազմակերպութեան, դպրոցական կեանքի մէջ նկատվող անկերպարան վիճակի մասին, սակայն մինչ այժմ ոչ մի փոփոխութեան փորձ չենք նկատում։ Փառք Աստուծոյ, մեզանում ևս զեղեցիկ ծրագիրների, լաւ մշակված, կոկ գրուածքների պակասութիւն չը կայ, բայց ինչ օգուտ, որ այդ բոլորը մնում են լոկ թղթի վրա։ Իշխանութիւնը թղթեր գրելով՝ իր պարտականութիւնը կատարած է համարում, սակայն ուսուցիչների դրութիւնը դրանով մաղաչափ անգամ չէ փոխվում։

Ուսուցչական պաշտօնը այժմ ամենասակաւ վարձատրվողն է մեր մէջ։ Կոպարները սահմանվելուց առաջ, զանազան դպրոցների հոգաբարձութիւնները, լաւագոյն այժեր հրապուրելու համար՝ 600—800 բուբլի ռոճիկ էին նշանակում ուսուցչին, իսկ այժմ ուսուցչի երաշած ամենաբարձր ռոճիկը 540 բուբլուց չէ անցնում, և սովորաբար, ուսուցիչը ստանում է 200-ից մինչև 400 բուբլի։ Ուսուցիչների վարձատրութեան նախկին չափը եթէ միջոց չէր տալիս ան օրվայ համար մի քանի կօպէկ յետ ձգել, դռնէ բաւական էր փոքր ի չատէ մարդավայել կենցաղավարութեան համար։ Ուսուցիչը կարող էր վայելչապէս հագնվել, երևալ հասարակութեան մէջ, հիւր գնալ, հիւր ընդունել, մի խօսքով պահպանել իր դիրքը, իսկ այժմ այդ բոլորից նա զրկված է, շնորհիւ չնչին վարձատրութեան։

Կամայ ակամայ կարելի էր համակերպվել և այժմեան չնչին վարձատրութեան հետ, եթէ դա ևս ապահովված լինէր։ Այն ինչ ուսուցիչը իր ստացած ռոճկի մի մասը ստիպված է գործադրել տարէց տարի մի դպրոցից, մի քաղաքից միւսը փոխադրվելու համար, երբ ունենում է այլ և այլ նիւթական կորուստներ ևս։ Այնուհետև մնացած սահմանվածքն ևս ուսուցիչը անկարող է իր ժամանակին ստանալ. կան դպրոցներ, որոնց վարչութիւնը տարիներով ուշացնում է ուսուցչի ռոճկի մնացորդը տալ, որովհետև փող չը կայ։

Որ մեր դպրոցները մեծ մասամբ մուրացկանութեամբ են կառավարվում,—դա յայտնի է ամենքին. բայց գուցէ բոլորին յայտնի չէ, որ այդ մուրացկանութեան գլխաւոր պատճառներից մէկը ևս առաջանում է հոգաբարձուների անհոգ նախահաշիւ կազմելուց։ Մեր դպրոցների հոգաբարձութիւնների մեծ մասի համար կարծէք պատուի խնդիր է դարձած բաժանմունքների քանակութիւնը չը պակասեցնելը, առանց ուշք դարձնելու դպրոցական առարկաների դասաւանդման վրա։ Այս ինչ հոգաբարձուի օրով դպրոցը երկդասեան է եղել, հինգ բաժանմունք է ունեցել, ուրեմն, պակասեցնել չէ կարելի. անպատուութիւն կը լինէր բաժանմունքներից մինը կամ միւսը փակել։ Դա դովելի նախանձ է, եթէ դրա հետ միացած լինէր և նոյնքան դովելի եռանդ և ջանադրութիւն—յատկութիւններ, որոնք մեծ մասամբ բացակայ են։ Մեր հոգաբարձութիւնները 10-ից 8-ը դէպքում նախահաշիւի մուտքի մէջ մտցնում են պատահական արդիւնքի խոշոր գումարներ, նախապէս յուսալով, որ այդ դրամը կը ստացվի ուսուցիչների աշխատութեամբ։ Եւ ամբողջ տարին ուսուցիչը ստիպված է թատրոն ներկայացնել, «աւետիս» և նոյն իսկ «այսօր յարեաւ» ման գալ, պարահանդէսներ կազմել, աջ ու ձախ մուրացկանութիւն անելով դպրոցի նիւթականը ապահովել, եթէ չէ կամենում քաղցած մնալ։

Պակաս չեն դէպքեր, որ ուսուցիչը ռոճիկ չը ստանալով և քաղցած չը մեռնելու համար՝ ստիպված է ամաչկոտութիւնը մի կողմ դնել և սրա նրա տունը ընկնել՝ մի տեղ հաց ուտելու, միւս տեղ թէյ խմելու համար։ Սակայն ամեն մարդ չէ կարող այդպէս ապրել և ահա տեսնում էք, որ ուսուցիչը ապրում է ապագայի յուսով, փողոցում ամենքից պարտքով ապրանք է վերցնում, նա ստիպված է 10—20 կօպէկներով փող վերցնել սրանից, նրանից։ Հոգաբարձութեան դրամարկղում կօպէկ չը կայ, ուսուցչի վարկը ընկած է փողոցում, նրան այլ ևս ոչ ոք հաւատ չէ ընծայում և պարտատէրերի անարդանքից ազատ մնալու համար՝ նա փողոց ևս չէ կարող դուրս գալ և հաղուադէպ չէ լսելը, որ ուսուցիչը ծածկաբար, գիշերով փախչում է պարտատէրերի ձեռքից։ Ցաւով և դառն կսկիծով այժմ պատահում է մեզ լսել, որ ուսուցիչը այս կամ այնտեղ, հոգաբարձութիւնից անկարող լինելով փող ստանալ, ստիպված է իր իրեղէնները, իր ժամացոյցը, ամանեղէնները քաղաքի գնով ծախել՝ մի կտոր հաց առնելու համար։ Սա արդէն ամօթ և անչնչելի նախատինք է այն մարդկանց համար, որոնք հայ ուսուցչին դնում են այդպիսի մուրացիկ վիճակի մէջ։ Եւ դեռ պահանջում են, որ տանը հաց չունեցող ուսուցիչը քաղցած փորով դասատուութիւն անի և հրաշալի էլ արդիւնքներ առաջացնի։

***

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Թէհրանից, ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովից, 200 բուբլի, հանգանակված իր նախաձեռնութեամբ. Վեհափառին ուղարկելու համար։

2) Սուխումից, Սիմէոն Ֆրանգուլեանի միջոցով հանգանակված՝ 41 բ. 10 կօպէկ։

3) Ղզլարից, Սերովբեանի միջոցով 5 բ. հանգանակած մի քանի մշակների մէջ։

Ուրեմն նախկին 724 բ. 72 կ. հետ այժմ ունենք 970 բ. 83 կօպէկ։

Այսօր, օգոստոսի 18-ին ուղարկեցինք.

1) Էջմիածին, Վեհափառ Կաթողիկոսին, 200 բուբլի։

2) Կարս, Բարեգործական ընկերութեան ճիւղին, գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար, 100 բուբլի։

3) Սեբաստացի մի չքաւոր գաղթականին, Պետրոս Նախաշեանին, իբրև նպաստ տուեցինք 3 բ.։

Մեզ մօտ մնում է 667 բ. 83 կ։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 8636 բ. 65 կ.։

Ուղարկել ենք 7969 բուբլի։

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

Օգոստոսի 9-ին

Այստեղի յաջորդ Նահապետեան վարդապետը կանչված է Էջմիածին. վաղը գործերը կը յանձնի Բաղրատ վարդապետ Թուաքալեանին և կը մեկնի։

Նոր հոգաբարձութիւնը ընտրված լինելով տեղական առաջադիմական կուսակցութիւնից, հաճելի չէր Նահապետեան վարդապետին, ուստի ամեն ջանք գործ դրվեց, որ նրանք հրաժարվեն. սակայն անաջող։ Հաստատութեան թղթերը ստանալով, հոգաբարձուները դիմեցին այդ վարդապետին, առաջարկելով, որ նա հասարակութեան ժողովի հրաւիրէ, ուր նրանք պէտք է յայտնեն գործերի դրութիւնը և միջոցներ մտածեն ուսումնարանի ապահովութեան համար։ Նահապետեան խոստացաւ, սակայն նկատելով, որ այդ ժողովում առաջ կը դան հին հոգաբարձուների գործունէութեան մասին քննադատութիւններ, երկար խոստումներից յետոյ, վերջը բոլորովին մերժեց այդ առաջարկութեան իրագործելը, պատճառ բերելով իր հեռանալը։—Թուաքալեան վարդապետը չէ ցանկանում Կարսում մնալ. սակայն քանի որ նրան են յանձնվել գործերը՝ նա կամայ ակամայ պէտք է վարէ. մենք յոյս ունենք, որ նա իր նախորդի նման չի վարի գործերը։

կառավարել։ Ներկայացուցիչները հետզհետէ գալիս են կառքերով. ամենից աւելի ուշադրութիւն են գրաւում Գերմանիայի զանազան համալսարանների ներկայացուցիչ ռէկտորները իրանց միջնադարեան պատմական հագուստներով, որոնք կամ մանտիայի ձևով են, կամ լայնթեթ ֆէրէջներ՝ սև կամ կարմիր գոյներով. թագաւորական սամոյրներ ևս կան. այս բոլորը, շատ քիչ բացառութեամբ, ոսկեթելերով ասեղնագործված են։ Քառանկիւնի, կլորակ ու եռանկիւնի սև կամ կարմիր թաւշեայ գլխարկներն էլ կրում են հնութեան համապատասխան կնիքը։ Ահա երևում են ուսանողական զանազան ընկերութիւնների նախագահները իրանց երկու երկու օգնականների հետ միասին (նախագահ, գանձապահ ու քարտուղար), իւրաքանչիւր ընկերութիւն կրելով իրան յատուկ դրօշակը։ Գերմանիայում ոչ միայն արհեստաւորը, այլ և ուսանողութիւնը ունի իր համքարութիւնները, սակայն այն տարբերութեամբ, որ վերջինները գիտութեան համքարութիւններ լինելու պատճառով, ճանաչվում ու հաստատվում են համալսարանից։

Ուսանողական իւրաքանչիւր համքարութիւն ունի իր որոշ գոյնի գլխարկը (կարմիր, կապոյտ կանաչ, և այլն), ու կրծքով ձգելու գոյնզգոյն ժապաւէնը. սա բաւական չէ. վարչութեան երեք անդամներն էլ (նախագահ, գանձապահ ու քարտուղար) այս տեսակ և ուրիշ հասարակական հանդէսներին կրում են այս ու այն ձևի միջնադարեան ասպետական հագուստներ։ Սրանք մեծ մասամբ սև թաւշեայ կարճիկ կափտաններ են, երկարավիզ կօշիկներ, սպիտակ անդրավարտիկներ, սպիտակ ձեռնոցներ ու սուրերը կողքերին գտնվող սրճարանները ու գարեջրատները վրխտում են մարդկանցով. սովորականից դուրս կենդանութիւն է տիրում գետի վրա. չը նայած որ այնքան էլ մեծ չէ, այնու ամենայնիւ նրա վրա լողում են մի քանի փոքրիկ շոգենաւեր, որպէս զբօսանքի միջոցներ. թէ այս շոգենաւերը, և թէ մակոյկները զարձեալ զարդարված են գոյնզգոյն դրօշակներով. քիչ չեն և մակոյկներով զբօսնողները։ Որ կողմը նայում էք՝ կեանք ու կենդանութիւն, երգեցողութիւն ու մուզիկա։ Դէս ու դէն երևում են զիշերվայ հրախաղութեան համար զանազան պատրաստութիւններ։

Արևի մայր մտնելու ժամանակ բազմութիւնը աւելի և աւելի ստուարանում է և կազմում կատարեալ մարդային ովկիանոս։ Բոլորը անհամբեր ու սրտատրոփ սպասում են երեկոյեան մթին. վերջապէս հասաւ ցանկալի վայրկեանը, ամեն կողմ պատեց երեկոյեան մթութիւնը, բլրակների վրա տարածվող սրճարանների ու գարեջրատների ասոյ-ճան բարձրացող ճրագները փայլփլում են ծառերի արանքներից, գետի վրա զբօսնող մակոյկներն իրանց օրօրումներով ու երբեմն հանդչող, երբեմն փայլփլացող կրակներով կարծէք մի փոքրիկ երկինք են կազմում մոգ կապուտակ Զալի վրա. քիչ հեռուն կամուրջը իր լապտերների ծիրանագոյն ու կարմիր բոցերով ներկայացնում է օդի մէջ կախված հրեղէն գընդակներ ու գլանակներ։

Մօտ ժամը 9-ին պաշտօնական թափորն ըսկսվեց. գետի մի ծայրում գտնվող կղզու վրա ընթրիքը վերջացրած՝ բոլոր ներկայացուցիչներն ու կողմնակի հրաւիրվածները, մօտ 5000 մարդ, տախտակամածով մտցրած մակոյկներով դիմեցին դէպի կամուրջը։ Այս ժամանակվանից սկսվեց թեթև հրախաղութիւն։ Հեռուից երևացող մակոյկների կրակները, մուզիկայի ներդաշնակ մելոդիան գետի ափին և բլրակների վրա միմեանց գլխին կուտակվող մարդկանց շշուկն ու աղաղակը իրար հետ խառնվելով՝ կազմում էին և՛ գրաւիչ, և՛ տարօրինակ տեսարան։ Տեղ տեղ բլուրների ու մակոյկների վրա բոցավառվում են կանաչ, կարմիր բենգալեան կրակներ և բոպէական տեսողութիւնից յետոյ հանդչելով՝ դարձեալ չորս կողմը տարածում են խաւար ու մթութիւն։ Որչափ գնացքը մօտենում է, այնչափ էլ հրախաղութիւնը բազմազան է դառնում. ահա բլրակների զանազան կէտերում մարդուս աչքերը ծակծկող զօրեղ կարմիր, կանաչ, ծիրանագոյն բենգալեան երկարատև բոցերը միանգամից լուսաւորեցին խաւարի մէջ թաղված բլրակներն ու Զալ գետը։

Ո՛րչափ զարմանալի է գերմանացի ժողովուրդը, որչափ օրինակելի. այս հրաշալի տեսարանների ժամանակ թեթև բացականչութիւններից զատ ոչ մի չափազանց ցոյց չէր անում. ըստ երևոյթին նա սառն է. բայց ինչ սրախօսութիւններ են անում միմեանց մէջ. անդամ ուզում են իրանց ձայներով արտայայտել պայթող նիւթերի շվոցն ու ծըծըլոցը։ Նա գիտէ ուրախանալ բաւական նշանակութեամբ. նա գիտէ իրան պահել. անթիւ բազմութեան մէջ ոչ մի աղմուկ, ոչ մի կռիւ տեղի չունեցաւ. այո՛, ոստիկաններ գրեթէ գոյութիւն չունէին. եղած մի քանի հատն էլ աննշմարելի էին ու անգործ։

(Կը շարունակվի)

Հին հոգաբարձութիւնը իրապէս բաղկացած էր միայն մի անձնաւորութիւնից, որը թէ երէցփոխ էր, թէ հոգաբարձու, և թէ հոգևոր կառավարութեան քարտուղար. նա Նահապետեանի բարեկամն էր և a la Ներսիսեան զպրոցի հին հոգաբարձութիւնը, երկար ժամանակ, առանց իրաւունքի, վարում էր թէ երէցփոխի և թէ հոգաբարձուի պաշտօնները, չը նայելով որ վաղուց իր ընտրութեան ժամանակամիջոցը լրացած էր։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկրագործութեան մինիստր Երմօլով այժմ գտնվում է Կալուգայի նահանգում։ Ամսիս 22-ին պ. մինիստրը կը լինի Նովոբոսիյսկում, որտեղից նա կը գնայ Պեատիգորսկ, ապա կը ճանապարհորդի դէպի Սև ծովի արևելեան ափերը և յետոյ կանցնի Անդրկովկաս։

—

Լսում ենք, որ ծխախոտի գործարանատէր Բոզարճեան նորից ընդունեց բոլոր բանւորներին, որոնք գործադուլ էին արել, և ամսիս 13-ից գործարանում նորից սկսվել են աշխատանքները։ Բանւորներից և ոչ մէկը չէ հեռացված իր պաշտօնից։ Բացի դրանից այժմ բանւորները այլ ևս պարտաւոր չեն կերակուր վերցնել գործարանի վարձված կապալառուից, որը նրանց կերակրում էր շատ վատ կերպով։ Իսկ ինչ վերաբերում է բանւորներից 13 տարվայ ընթացքում վերցրած փողերին,—այդ հարցը կը քննվի իր կարգով, օրինական ճանապարհով։

—

Սպահանի և Հնդկաստանի հայոց առաջնորդ Եսայի եպիսկոպոսը, ինչպէս հաղորդում է «Արարատը», արքեպիսկոպոսութիւն է ստացել։

—

Սեպտեմբերի 3-ից մինչև 12-ը Ժընէվում տեղի կունենայ արևելագէտների տասերորդ միջազգային կոնգրէս։ Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի խորհրդի անդամ Եզով գնալու է Ժընէվ՝ մասնակցելու կոնգրէսի նիստերին, որպէս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ներկայացուցիչ։

—

Երեքշաբթի երեկոյեան, օգոստոսի 15-ին, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան դահլիճի մէջ հոգեհանգիստ կատարվեց ընկերութեան պատուաւոր անդամ Ց. Խոտիսեանի համար։ Հոգեհանգստին ներկայ էին այդ ընկերութեան անդամները և ուրիշ շատերը։

—

Մեզ հեռագրել էին Էջմիածնից, որ Շուշու թեմական առաջնորդը և թեմական դպրոցի երկու հոգաբարձու Էջմիածին են կանչված։ Այժմ Շուշուց ստացած մեր տեղեկութիւններից երևում է, որ Էջմիածին են կանչվել երկու հոգաբարձու և թեմական դպրոցի կրօնուսոյց քահանան։ Առաջնորդը կանչված է եղել արդեօք և չէ գնացել, թէ բոլորովին կանչված չէ եղել,—այդ մեզ հստակապէս յայտնի չէ։ Լսում ենք, որ Շուշու թեմական դպրոցի տեսուչ Լ. Սարգսեան գնացել է Էջմիածին անձամբ հերքելու իր և ուսուցչական խմբի վրա բարձած զրպարտութիւնները։

—

Մեզ գրում են Թաւրիզից հետևեալը. «Տեղական Հայաստեաց Բարեգործական ընկերութեան անդամները, թիւրքահայ սովեալ քոյրերին մի թեթև օգնութիւն անելու համար, ամբողջ օրերով Թաւրիզի փողոցները պտտելով՝ հազար ու մի տեսակ նախատինքներ կրելուց յետոյ, վերջապէս կարողացան 400 թումանի չափ մի գումար հաւաքել։ Թէև Հայաստեաց ընկերութիւնը կամենում էր ինքը այդ փողը հասցնել ըստ պատկանելոյն, սակայն առաջնորդը ամեն կերպ աշխատում էր, որ ձեռք բերի այդ գումարը և ինքը ուղարկի։ Ով ուղարկէր մի և նոյն էր. սակայն սովը համարեա թէ վերջացաւ և տակաւին այդ գումարը դեռ քնած է։ Երբ պէտք է ուղարկվի՝ յայտնի չէ. և միթէ «Զատկից յետոյ կարմիր ձու եղած չեղած մի հաշիւ չէ։»

—

Հետևեալ ուշադրութեան արժանի տեղեկութիւնն են հաղորդում մեզ Կարսից. «Մենք մի անդամ առիթ ունեցանք գրելու դուխոբորների կրօնական պետ Վերիգինի արած կարգադրութեան մասին։ Այժմ դարձեալ լսում ենք, որ Վերիգին շրջաբերական թղթով հրամայել է.—արբեցողութիւնը և ծխախոտ ծխելը արգելվում են. կանայք, որքան կարելի է, պէտք է խուսափեն քաղաքները գնալուց, որովհետև հրապոյրը շատ է և նրանք անբարոյականանում են։ Նա հրամայում է վերջ տալ դուխոբորների մշտական պարապմունքին—բեռնակրութեանը, որովհետև դա արգելում է նրանց ամբողջապէս նուիրվել և զարգացնել երկրագործութիւնն ու անասնապահութիւնը։ Այդ կարգադրութիւնը առանձին նշանակութիւն ունի այն պատճառով, որ մօտ ապագայում շինվելու է երկաթուղու նոր գիծը Թիֆլիսից դէպի Երևան և Կարս, որով և բեռնակիրների աշխատութիւնը շատ կը սահմանափակվի։ Բայց Վերիգինի արած ամենանշանաւոր կարգադրութիւնն այն է, որ իւրաքանչիւր ոք, հարուստ թէ աղքատ, իր բոլոր շարժական կայքը, թէ դրամ և թէ անասուններ, պէտք է բերէ և ներկայացնէ համայնքին ի սեփականութիւն ընդհանուրի։ Իւրաքանչիւրի բերած ստացուածքը ցուցակագրելուց յետոյ՝ անձի թւով հաւասար բաժանում են։ «Ես ներկայ էի, պատմում էր մի հայ ականատես, թէ ինչպէս մէկը բերեց, օրինակ, 8 հազար, միւսը 20 հազար ռուբլի և այլն։ 400 կանայք ժողովվել էին Եֆրեմովկա գիւղում. դրանցից ամեն մէկը իր ձեռին ունէր իր հագուստեղէնի կապոցը, որից և բաժին էին հանում չունևորներին»։

—

Անդրկովկասեան չէյխ-ուլ-իսլամ, «Нов. Обозр.» լրագրի խօսքերով, նշանակված է Գօրիի ուսուցչական սեմինարիայի թուրքաց բաժանմունքի կրօնասոյց Մոլլա-Արդուսալամ Ախունդ-Զադէ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են հետևեալը. «Տէր-Եղնիկ քահանան Թիֆլիսից կաթուղիկոսի մօտ միջնորդ գալով, օգնութեամբ իբր 15,000 ր. արժէք ունեցող կայքերի, որոնք որպէս թէ նուիրվելու են Էջմիածնին, աջողում է, ասում են, թոյլտուութեան գիր հանել կաթողիկոսից, որ Թիֆլիսի Խօջիվանքում բացվի մի գերեզման, այնտեղից հանվի մի աղջկայ մարմին, որ մի երկու տարի առաջ, Մամբրէ եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, թաղված է եղել այդ հանգստարանում, և փոխադրվի՝ Վանքի բակում թաղվելու։ Աղջկայ աղգանունը Փանոսեան է։ Դեռ մի քանի տարի առաջ, տեղապահութեան օրով, աշխատելիս են եղել նրան Վանքի բակում թաղելու և խոստացել են տալ 5000 ր., բայց մերժումն են ստացել։»

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 6-ին Թիֆլիսի թեմի առաջնորդը եկաւ Գօրի, տեղական յաջորդ Եղիշէ վարդապետի և ժողովրդի մի որոշ խմբի մէջ ծագած տարաձայնութիւնը քննելու համար։ Այն օրից, երբ Եղիշէ վարդապետ Մուրադեանը եկաւ Գօրի իբրև յաջորդ, սկսեց եկեղեցական հաշիւները քննել, որը, ի հարկէ, դուր չեկաւ ազգային եկեղեցիները կապալով վերցրած երէցփոխներին։ Մի եկեղեցու երէցփոխի մատեաններում հրէշաւոր զեղծումներ են նկատվել. մի ուրիշ երէցփոխի ներկայացրած 15 տարվայ մատեանում միայն 40 կոպէկ մուտք է երևում. կան և ուրիշ մատեաններ, որոնք ձիւնի պէս սպիտակ են, և տարիների ընթացքում գրչի երես չեն տեսել, իսկ թէ ինչ է եղել եկեղեցու մուտքը կամ ծախքը՝ դա միայն երէցփոխին է յայտնի։ Եւ ահա Եղիշէ վարդապետը, իր գալու առաջին օրից, ուշադրութիւն դարձրեց այդ զեղծումների վրա, որը դուր չեկաւ եկեղեցական գործի կապալառուներին, որոնք սկսեցին հրէշաւոր բամբասանքներ թափել յաջորդի վրա, նոյն իսկ դիմեցին առաջնորդին բողոքով։ Առաջնորդը քննելով Եղիշէ վարդապետի գործը, անհիմն գտաւ նրա վրա բարդած մեղադրանքները և տեսնելով, որ նոր յաջորդը իր ստանձնած պաշտօնը ամենայն կողմից լաւ է կատարել, հրապարակով յայտնեց իր շնորհակալութիւնը, իսկ եկեղեցական փողերի համար հրամայեց երեցփոխներին՝ անմիջապէս ներկայացնել յաջորդին։ Առհասարակ Եղիշէ վարդապետը իր պաշտօնավարութեամբ ապացուցեց, որ արժանի է պաշտօնին։ Ցիրաւի, չէ անցել մի տարի, նա իր վիճակում հիմնել է մի քանի ուսումնարաններ և 10-ից աւելի եկեղեցիներ է բացել, որոնց դռները փակվել էին ժողովրդի համար։ Իբրև քարոզիչ Եղիշէ վարդապետը անփոխարինելի է Գօրու համար։ Առաջնորդի հետ Գօրի էր եկել և թեմական տեսուչ Մելեանը, քննելու այստեղի ուսումնարանական խճճված գործերը։ Ուսուցչական ամբողջ խումբը արձակվեց և յանձնվեց հոգաբարձութեան՝ նոր խումբ կազմելու»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Արդէն սկսել են վերադառնալ ճեմարանի աշակերտները, բայց ներս չեն ընդունվում ճեմարան այն պատճառաբանութեամբ, թէ նրանք արձակուրդի վայրկեան ստացել են մինչև օգոստոսի վերջը։ Եկած աշակերտներից մէկի համար ասում են, որ նա այժմ խանի մէջն է ապրում։ Նա մի փոքր շտապել էր գալ, որ վերաքննութեան պատրաստվի։»

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Սվանէթում սով է տիրում և ժողովուրդը վերին աստիճանի նեղդրութեան մէջ է։ Մի քանի անձանց առաջարկութեամբ, օգոստոսի 14-ին, Դաւիթ քահանայ Եարալեան հայոց եկեղեցում մի քարոզ խօսեց, նախ հայերէն, ապա վրացերէն լեզուով, հրաւիրելով հայերին օգնել իրանց դրացի վրացիներին։ Ժողովրդի մէջ հանգանակութիւն բացվեց և բաւական փող հաւաքվեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Չինական մի նշանաւոր դիպլոմատ, որը Բերլինի չինական դեսպանութեան անդամ է, նորերս, «Berliner Tageblatt» լրագրի խօսքերով, այն հաստատ համոզմունքը յայտնեց, թէ պատերազմը պէտք է վերջանայ ի նպաստ Չինաստանի։

«Չինացիները.—ասեց նա,—կը խուսափեն ծովային պատերազմից։ Լի-Խունգ-Զանգը ցանկանում է ընդհարում ունենալ եապօնացիների հետ ցամաքի վրա, այն ժամանակ, ի հարկէ, եապօնացիները ջարդ կը կրեն։ Չինաստանը, սակայն, հաստատ վճռել է պատերազմ մղել, մինչև որ յաղթութիւնը իր կողմը կը մնայ։

«Եւրոպայում կատարելապէս սխալ կարծիք է կազմված, որ չինական զօրքը այնպէս բարեկազմ չէ, որպէս եապօնականը։ Այդ կարծիքը նոյնքան սխալ է, որքան և այն մեղադրանքը, որ բարդում են չինացիների վրա, թէ նրանք այնքան ընդունակ չեն առաջադիմելու, որքան եապօնացիները, և այդ պատճառով էլ եապօնացիները մեծ համակրութիւն են վայելում եւրոպացիների մօտ։ Լի-Խունգ-Զանգը կարող է դեռ էլի 80 կամ 100 հազար լաւ զինաւորված և կարգապահութեան ընտելացած զօրք ասպարէզ բերել ամեն ժամանակ։ Ինչ որ վերաբերում է կուլտուրային, չէ՞ որ ուշադրութեան պէտք է առնել այն հանգամանքը, որ եւրոպական լուսաւորութիւնը, մի այնպիսի մեծ պետութեան մէջ, որպէս Չինաստանն է, չէ կարող այնպիսի նկատելի հետքեր թողնել, որպէս թողնում է փոքրիկ Եապօնիայում։

«Մենք ևս փորձեցինք մեր երիտասարդներին Եւրոպա ուղարկել՝ ուսում առնելու համար, բայց դժբախտաբար, այդ կողմից աջողութիւն չունեցանք։ Չինացիներին մեղադրում են այն բանում, որ նրանք ատելութիւն են զգում դէպի օտար ազգերը և այլն, մեղադրում են չինացիներին, որ նրանք կոտորում են միսիոներներին։ Սակայն չինացիները, ընդհակառակն, շատ բարեկամական զգացմունքներ ունեն դէպի եւրոպացիները. միթէ նրանք չը բաց արին իրանց բոլոր քաղաքները, իրանց բոլոր նաւահանգիստները եւրոպացիների առաջ։ Այն ինչ Եապօնիայում այն ժամանակ, երբ նա մօտեցաւ եւրոպական կուլտուրային, ատելութիւնը դէպի եւրոպացիները շատ զօրեղ էր, և մինչև այժմ էլ դեռ զօրեղ է։ Չէ կարելի մեղադրել ամբողջ չինական ժողովուրդը չինական ամբոխի ֆանատիկոս գործողութիւնների համար միսիոներների դէմ։ Դրանում միսիոներները իրանք էին մեղաւոր, որովհետև նրանք շատ քիչ ուշադրութիւն էին դարձնում չինական ազգարնակութեան ստորին խաւերի կրօնական զգացմունքների վրա։»

Չինական դիպլոմատը այն համոզմունքն է յայտնել, որ եւրոպական պետութիւնները չեն միջամտի կորէյական պատերազմին և միջազգային կոնտրոլ չեն հաստատի Կորէյի վրա։ Ադա նա հերքում է այն լուրը, որ իբր թէ Ռուսաստանը և Անգլիան դիտաւորութիւն ունեն գրաւել Կորէյի նաւահանգիստները։ Այդ պետութիւններից ոչ մէկը չէ ձգտում գրաւումներ անել Կորէյում։ Եթէ Չինաստանը կը յաղթէ, այն ժամանակ Կորէյի վիճակը առաջվայ նման կը մնայ նրան ձեռքում, որովհետև Կորէյան աւատական պետութիւն է. ինչ որ վերաբերում է ռէֆորմներին Կորէյում, Չինաստանը իսկոյն ձեռք կը զարկէ այդ գործին՝ հէնց որ պատերազմը կը վերջանայ։

Վերջաբանութեան մէջ չինական դիպլոմատը ասաց, որ զինուորական գործողութիւնները կը դադարեն սեպտեմբերին, երբ անձրևների շրջանը կը սկսվի, և նորից կը սկսվեն յունվարին, երբ, երևի, տեղի կունենայ ցամաքային մեծ պատերազմ, որը վճռական նշանակութիւն կունենայ, թէպէտ և պատերազմի տևողութիւնը առաջուց որոշել անկարելի է։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, օգոստոսի 10-ին

Ճիշդ է ասուած, թէ ամեն բանի վերջն է գովելի։ Կրօնական ժողովը, որ այնքան արժանաւոր ընդդիմադրութիւն մը ըրաւ կառավարութեան, ինքզինքն անձեռնհաս նկատելով տեղապահի ընտրութիւնը կատարելու,—վերջ ի վերջոյ համակերպեցաւ այդ հակօրինական պահանջներուն, և սպառնալիքներէ յուզուած ու վախցած, նիստ գումարելով կատարեց այդ ընտրութիւնը։ Ընտրուեցաւ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Երզնկայի նախկին առաջնորդը։ Ընտրութիւնը դեռ վաւերացուած չէ կայսերական իրատէով. ժողովականներն առանց իր հաւանութիւնն առնելու, ուղղակի հաղորդած էին արդիւնքը Բ. Դրան, այն յուսով, որ անգամ մը, բարձրագոյն վաւերացում ստանալէն ետքը, ալ անհնար պիտի ըլլար հրաժարիլ։ Սակայն Հմայեակ եպիսկոպոսը սպառնական նամակներու արհաւիրքին տակ ընկճուած, անցեալ կիրակի օրը, քարոզին մէջ յայտներ է արդէն, թէ ինքն անարժան է այդ պաշտօնին և թէ իրմէն շատ արժանաւորներ կան։ Սրբազանը հաստատապէս որոշեր է յամառիլ իր հրաժարականին վրա։

Ուրիշ սրտայոյզ լուր մը, որ կը բաւէ լոյս ձգելու բոլոր այն կարգերուն վրա, որ կը տիրեն օսմանեան կայսրութեան մէջ։ Անչուշտ ժամանակին, տակէզ վեց տարի առաջ, իմացած էք Կարկուռ անուն օտարականի մը ոտնձգութիւնները Երուսաղէմին պատկանող մեծ գետնի մը իրաւունքներու վրա։ Ամենամեծ զոհողութիւններով ցարութիւն պատրիարքը գործը հանեց սուլթանին բարեհայեցողութեան, և գետինին իրաւունքը կայսերական իրատէով Երուսաղէմի վանքին մնաց։ Այդ կարգադրութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց իր ժամանակին. գետնին արժէքն էր 300,000 ռուբլի։

Երէկ կիմանանք ստոյգ աղբիւրէ, թէ դարձեալ կայսերական իրատէով այդ գետինը Կարկուռին անցեր է։ Sapienti sat.

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոնի «Times» լրագիրը հաղորդում է, որ չինացիների դէմ եապօնացիների մղած պատերազմի ժամանակ Եասխանի մօտ, կորէյական զօրքերը պատերազմում էին եապօնացիների շարքում։ Ասում են, որ իբր կորէյական թագաւորը հրամայեց իր զինուորներին ամեն տեղ նպաստել եապօնացիներին և կռուել Չինաստանի դէմ, որը ցանկանում է Կորէյա իր գաւառը դարձնել։

—Չէխական լրագիրները պահանջում են, որ պապի մօտ պատգամաւորութիւն ուղարկվի, որը պէտք է թոյլտուութիւն խնդրի՝ ժամասացութիւնը կատարել սլավներէն լեզուով և վերականգնել չէխական եկեղեցու ինքնավարութիւնը։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ նորերս Կրէտէ կղզու նահանգապետին հրացանաձգարկ արաւ մի զինուոր։ Այժմ Կրէտէի նահանգապետ է նշանակված Թուրքան-բէյ, որը փաշայութիւն ստացաւ։ Թուրքան-փաշային շատ դժուար կը լինի խաղաղացնել կրետացիներին, որոնք ինքնավարութիւն են պահանջում։ Սամոս կղզու ազգարնակութիւնը նոյնպէս շատ դժգոհ է, որ թիւրքաց կառավարութիւնը չէ կամենում ընդունել Կարաթէոդորի-փաշայի հրաժարականը, որին պաշտօնանկ է արել Սամոսի ազգային ժողովը։ Ազգային ժողովը երկու պատգամաւորներ ուղարկեց Կ. Պոլիս՝ բացատրելու բոլոր հանգամանքները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ցգէտ քահանաների ձեռնադրութեան հետևեալ փաստն են հաղորդում Թաւրիզից. «Որոնց կարելի է Էջմիածնում ձեռնադրել՝ ձեռնադրում են, որոնց չէ՝ ուղարկում են անդր Արաքսի։ Այսօր, ամսիս 7-ին, մայր եկեղեցում երկու հոգի քահանայ ձեռնադրվեցին (մինը կուսակրօն)։ Առաջինը քիչ ու շատ կարդալ գիտէր, իսկ երկրորդի մասին հետևեալ անեկդօտն են պատմում. առաջնորդը կամենալով քննել նրան, ճաշոցը տալիս է կարդալու։—Սրբազան, էսիկ «ճ» չի, հարցնում է տէրտէրացուն, մատը դնելով մեծատառ ճ-ի տակը։—Գնա դեռ սովորի դա ինչ տառ է, յետոյ արի կը ձեռնադրեմ,—պատասխանում է առաջնորդը և ճանապարհ գցում։ Չէ անցնում երեք ամիս, ահա նոյն տիրացուն և մէկ ուրիշն էլ հեռը գալիս են Էջմիածնից մի մի յանձնարարականով։ Սուքաս եպիսկոպոսը ինչ անէր, պէտք է ձեռնադրէր։ Ձեռնադրվողները երկուսն էլ վանեցի են։»

* * *

Լօնդոնում, օգոստոսի 3-ին երեկոյեան, պայթիւն տեղի ունեցաւ մի պօստային արկղի մէջ, որ կպցրած էր մի տան պատին Նիւկրաբի առուարձանում։ Պօստային արկղում վառօդով լի մի խողովակ էր դրված, որը հետևեալ վերնագիրն էր կրում՝ «Ի յիշատակ Բավաշօլի, Բուրդէնի, Վալիանի և Կաղէրիօյի։»

* * *

Լեհական յայտնի քաղաքական գործիչ Դմոմաշևսկի այս օրերս Պոզնանում կարդաց մի հրապարակական դասախօսութիւն՝ լեհական գաղթականութեան մասին Ամերիկայում։ Նա ազգային թշուառութիւն է համարում լեհացիների դէպի Ամերիկա գաղթելը։ Լեհական ազգութիւնը, նրա կարծիքով, այնտեղ ոչ մի ապագայ չունի, որովհետև գաղթականների որդիքը չուտով մոռանում են լեհական լեզուն։ Ամերիկայում լեհական տարրը գոյութիւն կունենայ, մինչև որ Եւրոպայից կը սկսեն գալ նոր լեհացիներ. երբ այդ հոսանքը կը դադարի, լեհական ազգութիւնը կատարելապէս կայլասեալի և կոչնչանայ։

* * *

1893 թուի ընթացքում ոսկէ, արծաթէ և պղնձէ փող է կարված Պետերբուրգի դրամատանը ընդամենը 6,791,289 բուբլու (1891 թ.—6,446,668 ռ., իսկ 1892 թ.—4 610,951 ռ.)։ Անցած 1893 թ. մանաւանդ աւելի մեծացրած է ոսկէ և պղնձէ դրամների քանակութիւնը։ Ռուսաստանում շահագործական պղնձի քանակութեան մեծ մասը տալիս է Կովկասը. բացի նորերս «Պուշկին» շոգենաւով ուղարկված մեծ պարտիայից, մօտ օրերս շոգենաւով Օդէսայից դարձեալ ուղարկվեց Պետերբուրգի դրամատունը 2630 պուդ պղինձ՝ ամբողջութեամբ Կովկասից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 15 օգոստոսի։ Անիերում կայացած ազգային ժողովի վերջը Մելիլա ուղարկեց ռուսաց դեսպանութեանը մի ադրէս յօգուտ Ռուսաստանի հետ դաշնակցութեան, որպէս անհրաժեշտ հիմքի Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան։

ԲԵՐԼԻՆ, 15 օգոստոսի։ Երէկ Էսէնում կայացաւ Դորտմունդեան շրջանի հանքագործ բանուորների 186 ընկերութիւնների 424 ներկայացուցիչների համագումար ժողովը՝ քրիստոնէական ընկերակցութիւն կազմելու համար։ Համագումար ժողովը միաձայն վճռեց կազմակերպել Սաորին—Բէյնեան և Վեստֆալեան քարածուխի հանքերի բանուորների ընկերութիւն։ Այդ ընկերութեան անդամները պէտք է ստորագրութիւն տան, որ չեն պատկանում սոցեալ դէմոկրատական կուսակցութեանը։ Ընկերութեան նպատակն է աշխատել, որ արդար վարձատրութիւն լինի բանուորներին։

ԼՕՆԴՕՆ, 15 օգոստոսի։ Չինական գեներալ Լի 4000 հոգուց բաղկացած զօրաբաժնով այսօր առաւօտ եկաւ չինական գլխաւոր բանակատեղին, Պէնխանգում։ Գեներալ Խէյի առաջնորդութեամբ մի ուրիշ զօրաբաժնի դալը սպասվում է վաղը։—Հրատարակված է կայսերական հրաման, որի մէջ պախարակվում են այն պաշտօնեաները, որոնք թոյլ են տուել բռնութիւններ քրիստոնեայ միսիոներների դէմ և հրամանագրվում է մահվան պատիժ տալ յանցաւորներին։ Տզունգ Լի-նամն և փոխարքայ Լի Խունգ-Զանգ անգլիական դեսպանին իրանց ցաւակցութիւնը յայտնեցին պատահածի առիթով։

ԵՕԿՕՀԱՄԱ, 16 օգոստոսի։ Ժողովուրդը ցանկանում է, որ չուտով հարուած հասցնվի Չինաստանի սրտին և որ կենտրոնական եապօնական զօրքերը՝ նրանց արշաւանքը դէպի Պէկին ուղղելու համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Օգոստոսի 16-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	93 ռ.	10 կ.
Բերլին վրա 100 մարկ	— . .	45 ռ.	62½ »
Պարիզի վրա 100 ֆրանկ	— . .	— »	— »
Ոսկի — — արժէ	. .	7 »	47 »
Մաքսային կուպօններ	— . .	149 »	50 »
Արծաթ — — —	. .	— »	— »
Բօրսային դիսկօնտ	— . .	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	.	— »	— »
— — — — 2-րդ	.	— »	— »
— — — — 3-րդ	. .	— »	— »
4% պետական բէնտա.	. . . .	— »	94 »
5% ոսկեայ բէնտա 1884 թ.	. . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն.	. . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.		— »	— »
— — — 2-րդ	—	— »	— »
— — — 3-րդ	—	— »	— »
— — — 4-րդ	—	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		238 »	50 »
— — երկրորդ	—	227 »	25 »
Պետական երկաթուղային բէնտա.		101⅞ »	— »
4½ բէնտա	. . . . .	— »	— »
4% ներքին փոխառութեան	. . .	95⅝ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — —	.	— »	— »
4½% վիայակ. գիւղ. հող. բանկի.		102 »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		100 »	75 »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	.	152 »	— »
— — — թղթադ.	.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.		100⅛ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101⅛ »	— »
Օդեսայի — —		101 »	— »
Թիֆլիսի — —		— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		— »	— »
— — Քութայիսի —	.	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկկա, վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վիներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ—1—1½ ժ. ականջի, կոկորդի, և քթի.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխլի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴԻՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ *մատենադարանընթերցարանի համար հարկաւոր է մի գրադարանապետ, որը պէտք է լինի և քարտուղարի օգնականը։ Այդ պաշտօնը ստանձնել ցանկացողները հրաւիրվում են դիմել խորհրդի քարտուղարին, կամ գրաւորապէս կամ անձամբ ընկերութեան նորաբաց գրասենեակը։ Սօլօլակ, Սէրգիէվսկի փողոց, տուն Ալիխանեանի, առաւօտեան 9—11, կէսօրից յետոյ ժամ 5—8.*

(№ 93) 2—3

Իմ հասցէն Թիֆլիսում հետևեալն է.
Тифлисъ, Елизаветинская улица № 192
Хр. М. Кара-Мурза.

3—3 (№ 92) *Կարա-Մուրզա*

Կենտրոնական գրավաճառանոցում ծախվում են

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

1) „ԱՅՑ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“ 1890 թ.։ Գինը 60 կօպ.

2) „ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԶԱՆՈՒՄ“. 1890 թ.։ Գինը 20 կօպ.

(№ 88) 3—10

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպէրացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.

2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.

3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.

4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.

5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.

6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դոկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Պ. ՊԱՎԼՕՎ ԹԻՖԼԻՍ, Սէրգիեվսկայա փողոց, № 1.

Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանօվիչ Օհանէսօվ։

(№ 15) (Հ.) 28—50

Ազգիս Վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած

„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“։

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւետեան փողոց, տուն № 45։

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներին ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։

9—25 (№ 81 Սարգիս քահանայ Բէզնազարեանց

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

II-րդ տարի.

Օգոստոսի 22-ից աշակերտներ ընդունվում են՝ գիշերօթիկ, ցերեկօթիկ և երթևեկ, պատրաստվելու պետական բոլոր դպրոցները մտնելու համար։

Անհրաժեշտ տեղեկութիւնները և ծրագիրը կարելի է ստանալ ամեն օր առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը, իսկ երեկոյեան 5—8 ժամը։ Հասցէն՝ Тифлисъ, въ Сололакахъ, Садовая улица, д. Шадинова, № 38, противъ Гановской.

(№ 89) 3—5 (6, 11, 13, 17, 27)

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՐՕՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5.000 ռ., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեակ պրէմիա 30 ռ. 80 կօպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ռ. դումարների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թուի «Ռօսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 բուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թուի համար—12% է.։

Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 4—15

ՄՕՍԿՎԱ ՀԻՒՐԱՆՈՑ

„ՎԻՐԱԼ“

(Մեծ Դմիտրովկա և Սաօլեշնիկով փողոցների անկիւնում, Զուկսինի տանը)։ Հիւրանոցը ունի ամեն տեսակ յարմարութիւններ և գտնվում է քաղաքի կենտրոնում, թատրոնների մօտ։ Օրական 1 ռ. մինչև 10 ռ., ամսական 20 ռ. մինչև 170 ռ.։ Կան բաժանմունքներ ընտանիքների համար և վաներներ ցանկացողների համար։

(№ 87) 5—5

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Августа 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 33